



«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄԸ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ

ՀԵՂԻՆԱԿ՝ ՀՐԱԶԴԱՆԻ ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 1 ԱՎԱԳ
ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՑԻՉ ԱՆԱՀԻՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԽՈՒՄԲ /ԱՌԱՐԿԱՎ՝ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՂԵԿԱՎԱՐ՝ ԷՄՄԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՍԵՎԱՆ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ**

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ

Դպրոց՝ Հրազդանի N1 ավագ դպրոց

Ուսուցիչ՝ Գևորգյան Անահիտ

Նախաբան

Հանրապետության Երկրագործության գիտական կենտրոնը գտնվում է Արարատյան դաշտավայրում՝ Երևանից 20կմ հեռավորության վրա, Էջմիածին քաղաքում:

Երկրագործության գիտական կենտրոնը կազմավորվել է 1926թ. և հանդիսացել հանրապետության գյուղատնտեսական գիտության ամենախոշոր օջախը: Այն արդեն ունի 97 տարվա պատմություն:

Երկրագործության գիտական կենտրոնում կազմակերպվել են մի շարք գիտական ուղղություններ՝ բուսաբանության, հողագիտության, ագրոքիմիայի, բույսերի պաշտպանության էկոնոմիկայի, գյուղատնտեսության էլեկտրաֆիկացման հիդրոտեխնիկական, մելորացիայի, մեխանիզացիայի:

Երկրագործության գիտական կենտրոնը հանդիսանում է գյուղատնտեսական գիտության առաջատարներից մեկը, որտեղ կազմակերպվել են ագրոտեխնիկայի, սելեկցիայի, գենետիկայի, սերմնաբուծության, բանջար-բոստանային, կարտոֆիլի, գիտատեխնիկական ինֆորմացիայի, բիոքիմիայի և ֆիզիոլոգիայի, բիոֆիզիկայի բաժիններ:

Գիտական կենտրոնների այս բաժիններում աշխատել են և գիտական գործունեություն են ծավալել 2 ակադեմիկոսներ, 8 դոկտորներ, 84 գիտությունների թեկնածուներ:

Երկրագործության գիտական կենտրոնում բուծվել և այժմ էլ շարունակում է բուծվել աշնանային ցորենի և գարու նոր սորտեր, որոնք ապահովվում են բարձր բերքատվություն 70-80 ց/հա, ձմեռադիմացկուն են, հիվանդությունների նկատմամբ դիմացկուն, հատիկը հարուստ է սպիտակուցներով, սոսնձանյութով, անփոխարինելի ամինաթթուներով և ունեն բարձր հացաթխման որակ:

Մասնակցությունը հիմնականում իրականացրել են գիտական կենտրոնի սերմնաբուծության բաժնում, որտեղ գիտական հետազոտություններ են տարվում հացահատիկային և հատիկաբնդեղեն մշակաբույսերի ուսումնասիրության ուղղությամբ, որի նպատակն է հանրապետության տարբեր բնակլիմայական պայմանների համար ստանալ բարձր բերքատու, չորադիմացկուն, ցրտադիմացկուն, հիվանդությունների նկատմամբ կայուն սորտեր, և լավագույն սորտերը ներդնել գյուղատնտեսական արտադրությունում մշակելու համար:

Սերմնաբուծությունը գյուղատնտեսական գիտության հիմնարար ճյուղերից է, որի խնդիրն է նաև ապահովել հացահատիկային և հատիկաբնդեղեն մշակաբույսերի տարեցտարի աճող ցանկատարածությունները անհրաժեշտ քանակի սերմացուով ապահովումը:

Երկարատև գիտական ուսումնասիրությունների արդյունքում բուծվել են աշնանացան ցորենի 18 բարձրարժեք սորտեր, որոնցից 2-ը երկցան են, այսինքն՝ կարող են մշակվել և՛ գարնանը, և՛ աշնանը, ինչպես նաև աշնանացան գարու 10 սորտ, որից 5-ը երկցան են:

Երկրագնդի բնակչությանն անհրաժեշտ սննդամթերքով ապահովման հիմնախնդրի լուծումը ենթադրում է բուսական ծագում ունեցող սպիտակուցի արտադրության ավելացում: Այս տեսանկյունից հացահատիկաընդեղեն մշակաբույսերը հանդիսանում են բուսական սպիտակուցի աղբյուր, որի անբավարար քանակությունը բացասական է ազդում մարդու օրգանիզմի ֆունկցիոնալ և ֆիզիոլոգիական զարգացման վրա:

Հանրապետությունում ներկայումս մեծ ուշադրություն է դարձվում բուսական ծագում ունեցող սպիտակուցների արտադրության ավելացմանը: Այս նպատակով երկրագործության գիտական կենտրոնում ուսումնասիրություններ են տարվում նաև այս ուղղությամբ: Այս խնդրի լուծման նպատակով գիտական կենտրոնի սերմնաբուծության բաժնում անհատական ընտրության մեթոդով ստացվել և փորձարկվել են սիսեռի, ոսպի, ոլոռի, սոյայի և գետնանուշի բարձր բերքատու սորտեր և ներդրվել գյուղատնտեսական արտադրություն ֆերմերային տնտեսություններում մշակելու համար:

Այս ուղղությամբ կատարվող 2 գիտական ուսումնասիրությունների իրականացման աշխատանքներին անձամբ մասնակցություն են ունեցել:

Մաս առաջին

Ցորենի համաշխարհային հավաքածուի երկցան սորտանմուշների ուսումնասիրությունը Հայաստանի Հանրապետության պայմաններում

Ցորենի բերքատվության և որակի բարձրացումը եղել և մնում է որպես բնակչության գլխավոր սննդամթերք:

Ցորենի բարձր բերքատու սորտերի ստացումը և ներդրումը գյուղատնտեսական արտադրություն, որոնք հարմարված են հանրապետության տարբեր բնակլիմայական պայմաններին մշտապես հետազոտողների ուշադրության կենտրոնում: Երկցան ցորենների 6 սորտանմուշների էկոլոգիական փորձարկումը ցույց է տվել, որ այդ սորտանմուշները ապահովել են կենսաբանական և տնտեսական լավագույն ցուցանիշներ: Հետագա ուսումնասիրության համար ընտրվել են 2 լավագույն սորտանմուշ 950129 և 060050:

Բանալի բառեր- ցորեն, սորտ, երկցան, բերք և որակ

Արդիականություն

Հայաստանում գյուղատնտեսական արտադրության մակարդակը պայմանավորված է հասկային հատիկային մշակաբույսերով, հիմնականում աշնանացան ցորենով:

Հայտնի է, որ գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը հիմնականում կախված է սորտի կենսաբանական և տնտեսական հատկանիշներով:

Ակնհայտ է, որ ցորենի բերքատվության բարձրացման համար անհրաժեշտ է նոր բարձր բերքատու սորտերի ստացումը և ներդրումը արտադրություն: Այս տեսանկյունից հանրապետության տարբեր բնակլիմայական պայմանների համար կարևոր նշանակություն ունի նոր բարձր բերքատու ցորենի երկցան սորտերի ստացումը:

Հանրապետության նախալեռնային և լեռնային գոտիների համար երկցան ցորենների նշանակությունը ավելի առաջնահերթ է դառնում ձմեռային խիստ կլիմայի պայմաններում, քանի որ այս պայմաններում հաճախ ցորենի ցանքատարածությունները ցրտահարվում են: Այս գոտիներում գարնանը երկցան ցորեն, ինչը նպաստում է ցանքատարածությունների լիարժեք վերականգնմանը:

Այս խնդրի լուծման նպատակով ցորենի համաշխարհային հավաքածուից մեր կողմից ուսումնասիրվել է 60 երկցան սորտանմուշներ, նպատակ ունենալով անհատական ընտրության մեթոդով ստանալ լավագույն սորտեր, որոնք ավելի արդյունավետ են շրջանացված սորտերի համեմատությամբ:

Համաշխարհային հավաքածուն ուսումնասիրվել և ընտրվել է Արարատյան դաշտավայրի պայմաններում Երկրագործության գիտական կենտրոնի Էջմիածնի փորձարարական տնտեսության հողային տարածքում: Հետագա ուսումնասիրության համար 60 երկցան սորտանմուշներից ընտրվել է 6 լավագույնը, որոնք փորձարկվել են հանրապետության լեռնային գոտու պայմաններում:

Արարատյան դաշտավայրում ցանքը կատարվել է հոկտեմբերի 2-րդ տասնօրյակում, իսկ լեռնային գոտու պայմաններում օգոստոսի 3-րդ տասնօրյակում: Ցանքի նորման երկու գոտում կազմել է 5մլն. ծլունակ հատիկ հեկտարին: Ստուգիչ է հանդիսացել աշնանացան ցորենի շրջանացված գիտական կենտրոնում բուծված Նաիրի-68 սորտը: Դաշտային փորձերը երկու պայմաններում դրվել և կրկնողությամբ, 25մ² փորձամարզերում:

Արարատյան դաշտավայրի պայմաններում մեր ուսումնասիրությունների երեք տարվա միջին արդյունքները ցույց են տվել, որ ստուգիչ Նաիրի-68 սորտի համեմատությամբ ընտրված երկցան ցորենները կենսաբանական և տնտեսական ցուցանիշներով գերազանցում են շրջանացված սորտին:

**Արարատյան դաշտավայրի պայմաններում
ընտրված ցորենի երկցան սորտանմուշների
կենսաբանական և բերքատվական ցուցանիշները**

Հ/Հ	Սորտանմուշները	Դաշտային ծլունակություն, %	Ապրելիություն, %	Բույսերի բարձրություն, սմ	На одном коло		Բերքը, ց/հա	Բերքի հավելումը, ց/հա
					Հատիկների թիվը, հատ	Հատիկների կշիռը, գ		
1.	Նաիրի-68	65,4	91,3	95,0	54,4	3,7	52,2	-
2.	950129	76,2	96,0	98,2	61,3	4,5	57,9	5,7
3.	060074	73,4	99,0	99,0	55,9	4,3	55,5	3,3
4.	070541	74,0	93,0	97,3	58,0	4,0	54,8	2,6
5.	07564	75,2	95,2	98,9	58,4	4,5	56,0	3,8
6.	060050	75,8	96,0	100	59,9	4,6	57,0	4,8
7.	060043	74,4	95,7	95,1	57,2	4,1	53,2	1,0

HCP₀₅ = 3,4ս/ցա

Աղյուսակ 1-ի տվյալները ցույց են տալիս, որ ընտրված 6 լավագույն սորտանմուշների մոտ դաշտային ծլունակությունը բարձր է ստուգիչ սորտի համեմատությամբ և ըստ սորտերի տատանվում է 5.8 – 10 % : Ընտրված սորտանմուշները ավելի ցրտադիմացկուն են և այդ ցուցանիշը ըստ ընտրված սորտերի տատանվում է 93-ից 96% Նաիրի-68 սորտի մոտ ցրտադիմացկունությունը 96% է:

Հետազոտությունները ցույց են տվել նաև, որ ընտրված սորտանմուշները, ստուգիչ Նաիրի-68 սորտի համեմատությամբ կարճացողուն են 3-5 սմ-ով:

Գիտական հետազոտությունների արդյունքներով և պրակտիկայով ապացուցված է, որ ցորենի բերքատվության ձևավորման 25-50%-ը բաժին է ընկնում սորտի կենսաբանական, մորֆոլոգիական, տնտեսական հատկանիշներին և ազդոտեխնիկային: Բարձր արդյունավետություն ունեն այն սորտերը, որոնց մոտ հատիկի կշիռը հասկում 2գ և ավել է:

Երկցան ցորենների սորտանմուշների ուսումնասիրությամբ բացահայտվել է, որ ստուգիչ սորտը նույնպես բարձր բերքատու է, սակայն ընտրված սորտանմուշները ստուգիչին գերազանցում են 1-5.7ց/հա: Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ եթե ստուգիչում մեկ հասկի հատիկների թիվը և կշիռը կազմում է 54.4 հատ և 3.7գ, ապա

ընտրված սորտանմուշների մոտ այս ցուցանիշները տատանվում են 55.9-62.3 հատ և 4.1-4.9գ: Մեկ հասկի հատիկների թվով և կշռով լավագույնը հանդիսացել են 950129(61.3 և 4.5գ) և 060050 (59.9 հատ և 4.6գ) սորտանմուշները, որոնց մոտ ստուգիչ Նաիրի-68 սորտի համեմատությամբ բերքատվությունը հեկտարի հաշվով բարձր է 5.7 և 4.8գ:

Երկցան 6 սորտանմուշների փորձարկումը լեռնային գոտում որպես զարնանացան ցույց է տվել, որ այդ սորտանմուշները պահպանում են իրենց սորտային առանձնահատկությունները նաև այս պայմաններում: Գարնան ցանքերում սորտանմուշները իրենց կենսաբանական և տնտեսական հատկանիշներով գերազանցել են նույնպես Նաիրի-68 (աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Երկցան ցորենի կենսաբանական և բերքատվության ցուցանիշները լեռնային բնակլիմայական պայմաններում

Հ/Հ	Սորտանմուշները	Դաշտային ծլունակություն, %	Ապրելիություն, %	Բույսերի բարձրություն, սմ	1 հասկի		Բերքը, գ/հա	Բերքի հավելումը, գ/հա
					Հատիկների թիվը, հատ	Հատիկների կշիռը, գ		
1.	Նաիրի-68 (ստուգիչ)	66,0	92,7	95,0	53,7	3,4	51,8	-
2.	950129	75,2	95,0	100	59,1	4,5	56,7	4,9
3.	060074	74,8	94,1	99,5	59,9	4,2	54,2	2,4
4.	070541	73,3	93,5	98,0	56,0	4,0	53,6	1,8
5.	07564	74,4	94,1	96,8	56,6	4,3	54,0	2,2
6.	060050	75,7	94,8	98,7	58,7	4,4	55,9	4,1
7.	060043	74,8	93,4	94,8	55,5	3,9	52,1	0,3

ԱԷԱ=3.4գ/հա

Աղյուսակ 2-ի տվյալները ցույց են տալիս, որ ստուգիչ սորտի համեմատությամբ դաշտային ծլունակությունը սորտանմուշների մոտ բարձր է 7.3-9.7%: Այս պայմաններում դաշտային ծլունակության ամենաբարձր ցուցանիշ ապահովել են 950129 և 060050 սորտանմուշները (75.2 և 75.7%): Վեգետացիայի վերջում բույսերի ապրելիության ամենաբարձր տոկոս ապահովել են նույն

սորտանմուշները և այն կազմել է 95.0 և 94.8%: Նաիրի-68 ի մոտ այս ցուցանիշը 92.7% է:

Լեռնային պայմաններում փորձարկված երկցան ցորենների փորձարկումը ցույց է տվել, որ այդ սորտանմուշները արդյունավետությամբ չեն զիջում աշնանացան ձևերին (աղյուսակ 2):

Մեկ բույսի հատիկների թվով և կշռով բոլոր ընտրված սորտանմուշները գերազանցում են Նաիրի-68 սորտին: Այսպես, եթե ստուգիչում այս ցուցանիշները կազմել են 53.7 հատ և 3.4գ, ապա սորտանմուշների մոտ այդ ցուցանիշները ըստ սորտերի տատանվել է 55.5- 59.9 հատ և 4.0-4.5գ: Արդյունքում ձևավորվել է բարձր բերք 54.0-56.7 գենոներ հեկտարի հաշվով: Ստուգիչում բերքատվությունը 53.7g/հա է:

Այսպիսով, ցորենի համաշխարհային հավաքածուից ընտրված երկցան ցորենի սորտանմուշների փորձարկումը հանրապետության լեռնային բնակլիմայական պայմաններում ցույց է տվել, որ փորձարկված 6 սորտանմուշները նույնպես ապահովել են կենսաբանական և բերքատվական հատկանիշներ:

Մաս երկրորդ

Գարնանացան սիսեռի նոր սորտերի կենսաբանական և բերքատվության ցուցանիշները Հայաստանի պայմաններում

Հայաստանում հատիկարնդեղենների տարածված տեսակներից է սիսեռը: Միսեռը շնորհիվ իր կենսաբանական և տնտեսական հատկանիշների հանդիսանում է հեռանկարային մշակաբույս հանրապետությունում:

Հանրապետության տարբեր գոտիների բնակլիմայական պայմանները պահանջում են նոր բարձր բերքատու հեռանկարային սորտեր, որոնք կայուն կլիմեն արտաքին պայմանների սթրեսային գործոնների նկատմամբ, պիտանի մեքենայական բերքահավաքի:

Այս նպատակով սիսեռի համաշխարհային հավաքածուից անհատական ընտրության ճանապարհով ստացվել են գարնանացան սիսեռի 4 սորտեր – Լիլիթ, Ալինա, Միսիան և Հացավան, որոնք կենսաբանական և տնտեսական հատկանիշներով գերազանցել են Լենինական-313 տեղական սորտին:

Բանալի բառեր- սիսեռ, սորտ, ընտրություն, բերք:

Արդիականություն

Հայաստանի Հանրապետությունում հողի սեփականաշնորհումից հետո վերջին տարիներին ֆերմերային և գյուղացիական տնտեսությունների ցանքատարածությունների մասնատվածությունը, երկրագործության անկանոն վարումը, բազմամյա խոտաբույսերի և հատիկարնդեղեն մշակաբույսերի

ցանքատարածությունների կրճատումը, հանքային և օրգանական պարարտանյութերի ոչ բավարար ներմուծումը բերել է գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության և հողի բերրիության անկման:

Գյուղատնտեսական մշակաբույսերի բազմազանությունը նոր այլընտրանքային բարձր բերքատու մշակաբույսերով, հատկապես հատիկաընդեղեններով կնպաստի բերքատվության բարձրացմանը և հողի բերրիության լավացմանը, քանի որ հողի սեփականաշնորհումից հետո ցորենը հանրապետությունում դարձել է մոնոկուլտուրա:

Աշնանացան ցորենի ցանքատարածությունների կրճատումը և հատիկաընդեղեն մշակաբույսերի ներդրումը և ցանքատարածությունների ավելացումը կնպաստի հողի բերրիության բարձրացմանը, կհանդիսանա արդյունավետ միջոց մոլախոտերի դեմ պայքարում, հատկապես միամյա, ինչպես նաև գյուղատնտեսության վարման ավանդական մեթոդներից աստիճանաբար անցում կկատարվի դեպի օրգանական գյուղատնտեսություն: Հատիկաընդեղեն մշակաբույսերի ցանքատարածությունների ընդարձակումը բարձր բերքատու սորտերի ստացմամբ և ներդրմամբ կլուծի հանրապետության գյուղատնտեսության մի շարք կարևոր հիմնահարցեր.

- Հողի հարստացումը բույսերի համար անհրաժեշտ մատչելի ազոտով
- Բնակչությանը սեփական արտադրության հաշվին բուսական սպիտակուց պարունակող սննդամթերքով ապահովումը
- Ֆերմերային տնտեսությունների եկամուտների ավելացումը:

Հաշվի առնելով հատիկաընդեղեն մշակաբույսերի դերն ու նշանակությունը սիսեռի նոր բարձր բերքատու սորտի ստացումը և ներդրումը հանրապետության տարբեր բնակլիմայական պայմանների համար միանգամայն կարևոր է:

Քանի որ սորտի ստացումը սելեկցիայի ավանդական ձևերով աշխատատար պրոցես է, ապա մեր կողմից գիտական կենտրոնի սերմնաբուծության բաժնում անհատական ընտրության ճանապարհով ստացվել է սիսեռի համաշխարհային հավաքածուից զարնանացան սիսեռի 4 սորտ-Լիլիթ, Ալինա, Միսիան և Հացավան, քանի որ անհատական ընտրության մեթոդը ավելի կարճ և հասանելի մեթոդ է:

Այս սորտերի ուսումնասիրությունը և դաշտային փորձերը տարել ենք գիտական կենտրոնի Էջմիածնի փորձարարական տնտեսության հողային տարածք: Այս սորտերի համար ստուգիչ է հանդիսացել տեղական Լենինականի -313 սորտը, որը ստացվել է 1949թ. գիտական կենտրոնի Լենինականի սելեկցիոն կայանում անհատական ընտրության մեթոդով:

Հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ Լենինականի-313 սորտի բույսերի բարձրությունը 49-58 սմ: Տերևները օվալաձև կտրտված եզրերով, հակառակ կողմից՝ թավոտ: Ցողունը ծաղկման փուլում բաց կանաչ, ցողունների թիվը 4 հատ, ծաղիկները սպիտակ են: Ունդերը դեղին են 1-2 հատիկների պարունակությամբ: Հատիկը կլորավուն է, բաց դեղնավուն, թեթև կնճռոտ: Սորտը կայուն չէ ասկոխիտոզի նկատմամբ:

Լիլիթ սորտը ստուգիչ Լենինականի-313 սորտի համեմատությամբ չորադիմացկուն է, բարձր բերքատու, կայուն հիվանդությունների նկատմամբ: Սորտը վաղահաս է 90-115 օր վեգետացիայի տևողությամբ: Բույսերը կոմպակտ են 56-58սմ բարձրությամբ, ցողունը կանաչ, տերևները կենտ փետրաձև, օվալաձև, եզրերը կտրտված: Ունդերը դեղնադարչնագույն, փոքր կնճիթիկով: Մեկ բույսի հատիկների միջին թիվը տատանվում է 50-52 հատ (աղյուսակ 1):

Միսիան սորտը վաղահաս է, վեգետացիայի տևողությունը 109-113 օր: Բույսերը կոմպակտ են, կանգուն, թույլ թավոտ, կանաչ, ծաղիկները ծոցային: Տերևները կենտ փետրաձև, եզրերը կտրտված: Ունդերը դեղնագորշագույն, կտուցիկով: Հատիկը կլորավուն, դեղնավարդագույն:

Ալինա սորտը վաղահաս է, վեգետացիայի տևողությունը 100-110 օր: Չորադիմացկուն է, կայուն ասկոխիտոզի նկատմամբ: Բույսերը կոմպակտ են, կանգուն: Ունդի մաշկը թույլ զարգացած, դեղնավարդագույն: Հատիկը միջին մեծության, օվալաձև, դեղնավուն, կնճոտ:

Հացավան սորտը վաղահաս է, երաշտադիմացկուն, կայուն ասկոխիտոզի նկատմամբ: Վեգետացիայի տևողությունը 100-109, օր: Բույսերը կոմպակտ են, կանգուն, թույլ թավոտ: Տերևները կենտ փետրաձև, տերևիկները օվալաձև, հակադիր, ծաղիկները մանր ծոցային: Ունդի մաշկը թույլ զարգացած, դեղնագորշագույն: Հատիկը միջին մեծության, երիկամաձև, դեղնավարդագույն, կնճոտ:

Ուսումնասիրության արդյունքները ցույց են տվել, որ կենսաբանական ցուցանիշներով ընտրված սորտերը բավականին գերազանցում են ստուգիչ սորտին: Այսպես, աղյուսակ 1- ի տվյալները ցույց են տալիս, որ բույսերի բարձրությունը նոր սորտերի ստուգիչ Լենինական-313 սորտի համեմատությամբ տատանվում է 49-58սմ սահմաններում: Ստուգիչում այս ցուցանիշը 43սմ է, այսինքն նոր սորտերը ավելի բարձր են և կանգուն:

Հատիկաընդուն մշակաբույսերի մոտ առաջին ունդի ձևավորման բարձրությունը հողի մակերեսից կարևոր ցուցանիշ է մեքենայական բերքահավաք կատարելիս: Որքան բարձր է այս ցուցանիշը այնքան տվյալ սորտը համարվում է լավագույն: Ընտրված բոլոր սորտերի մոտ այս ցուցանիշը բարձր է ստուգիչ Լենինական-313 սորտի համեմատությամբ 1.4-3.1սմ: Առաջին ունդի ձևավորման ամենամեծ (27.3սմ) բարձրություն ունեցել է Լիլիթ սորտը: Մեկ բույսի ցողունների թվով ստուգիչ սորտից անցնում են Միսիան, Ալինա և Հացավան սորտերը, որոնց մոտ ճյուղերի թիվը կազմում է 5 հատ (աղյուսակ 1): Ստուգիչ Լենինական-313 սորտը զիջում է ընտրված սորտերին նաև մեկ բույսի ունդերի թվով 9-20 հատ, մեկ բույսի հատիկների թվով 11-20 հատ և հատիկների կշռով 1.1-2.7գ (աղյուսակ 1):

Կատարված ուսումնասիրություններից պարզվել է, որ ստացված սորտերը ավելի բերքատու են, քան ստուգիչ Լենինական-313 սորտը: Այսպես, ինչպես ցույց են տալիս աղյուսակի տվյալները բերքի հավելումը ըստ սորտերի տատանվում է 1.5-2.9գ/հա կամ 5.9-11.5%:

Հատիկի որակական ցուցանիշների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ սորտերը հատիկի որակով նույնպես տարբերվում են Լենինական-313 սորտից:

Այսպես, աղյուսակ 2- ի տվյալները վկայում են, որ 1000 հատիկի քաշը նոր սորտերի մոտ: Եթե ստուգիչում 1000 հատիկի կշիռը 304գ է, ապա Լիլիթ, Միսիան, Ալինա և Հացավան սորտերի մոտ 1000 հատիկի կշիռը կազմում է համապատասխանաբար 364.0, 432.0, 448.0 և 463.0գ:

Աղյուսակ 1

Գարնանացան սիսեռի մի քանի սորտերի կենսաբանական ցուցանիշները

Հ/Հ	Սորտը	Բարձրությունը, սմ	Առաջին ունդի ձևավորման բարձրությունը, սմ	1 բույսի				Հատիկ	
				ցողունների թիվը, հատ	ունդերի թիվը, հատ	հատիկների քանակը, հատ	հատիկների կշիռը, գ	տեսքը	գույնը
1.	Լենինականի-3/3 (ստուգիչ)	43	24,2	4	43	45	21,2	թույլ կնճռոտ	դեղնավուն
2.	Լիլիթ	58	27,9	4	52	56	22,9	կնճռոտ	դեղնավարդագույն
3.	Միսիան	51	25,6	5	60	64	23,9	կնճռոտ	դեղնավարդագույն
4.	Ալինա	49	25,9	5	58	63	22,3	կնճռոտ	դեղնավարդագույն
5.	Հացավան	50	27,0	5	63	65	23,5	կնճռոտ	դեղնավարդագույն

Աղյուսակ 2-ի տվյալները ցույց են տալիս, որ նոր սորտերը ստուգիչ սորտին գերազանցում են ազոտի (0.65-0.99) և հում պրոտեինի (4.1-6.2) տոկոսով:

**Գարնանացան սիսեռի նոր սորտերի
բերքատվությունը և որակական ցուցանիշները**

Հ/Հ	Սորտը	Բերքը, ց/հա	Բերքի հավելումը		1000 հատիկի կշիռը, գ	Ազոտ, %	Հում պրոտեին, %
			ց/հա	%			
1.	Լենինականի- 3/3 (ստուգիչ)	25,3	-	-	304,0	3,36	21,0
2.	Լիլիթ	28,2	2,9	11,5	364,0	4,09	25,6
3.	Միսիան	26,8	1,5	5,9	432,0	4,01	25,1
4.	Ալինա	27,4	2,1	8,3	448,0	4,35	27,2
5.	Հացավան	27,7	2,4	9,4	463,0	4,32	27,0

Եզրակացություն

Այսպիսով, մասնակցելով Երկրագործության գիտական կենտրոնի սերմնաբուծության բաժնում կատարվող երկու գիտական հետազոտության արդյունքներին, որի նպատակն էր երկցան ցորենների համաշխարհային հավաքածուից և սիսեռի համաշխարհային հավաքածուից ընտրել անհատական ընտրության ճանապարհով երկցան ցորենի նոր բարձր բերքատու սորտեր, որոնք կարող են մշակվել հանրապետության տարբեր էկոլոգիական պայմաններում: Այդ աշխատանքների արդյունքում ընտրվեց 2 լավագույն սորտանմուշ 950129 և 060050, որոնք բարձր բերքատու են: Սիսեռի համաշխարհային հավաքածուից անհատական ընտրության ճանապարհով ընտրվեց 4 սորտ – Լիլիթ, Ալինա, Սիսիան և Հացավան, որոնք պետական սորտափորձարկում են անցել և կներդրվի ֆերմերային տնտեսություններում մշակելու համար:

Գրականություն

1. Барбарян А.А., Матевосян Л.Г. , Шабоян Г. Г., Казарян Р.Г. , Алиханян Н.А. – Экологические испытания сортов нута в разных почвенно-климатических условиях Республики Армении. Евразийский союз ученых (ЕСУ), # 8(77) 2020 г. ст. 55-57
2. Казарян Р.Г., Епремян Дж.В. , Овсепян Г.В., Барбарян А.А. – Результаты экологического испытания некоторых морозоустойчивых сортов мировой коллекции нута в условиях Араратской равнины предгорных и горных зон республики. Известия ГАУА , И 1, Ереван , 2012Г., ст. 34-36
3. Казарян Р.Г., Садоян Р.Р. , Заргарян Л.С. – Исследования некоторых сортов нута в условиях Сюникского марза. Агротитутюн, И 2, Ереван , 2014Г. ст . 22-25
4. Садоян Р.Р., Барбарян А.А. – Некоторые хозагробриологические показатели новых сортов мягкой пшеницы. Annals of agrarian science vol.12, no 2, 2014 ст.26-28.

Բովանդակություն

ՆԱԽԱԲԱՆ.....	2
ԳԼՈՒԽ 1. Ցորենի համաշխարհային հավաքածուի երկրցան սորտանմուշների ուսումնասիրությունը Հայաստանի Հանրապետության պայմաններում.....	3
ԳԼՈՒԽ 2. Գարնանացան սիսեռի նոր սորտերի կենսաբանական և բերքատվության ցուցանիշները Հայաստանի պայմաններում.....	7
ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ.....	12
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....	13